«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՎՊՄԻ-ի ռեկտոր, բգդ

_____ Խաչատրյան Գ.Կ.

“_30_” _10__2009թ.

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՎՊՄԻ-ի մագիստրատուրայի ուսանողների
Մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկայի

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում
(արձանագր. թիվ _9__ “_30__ “_10_ 2009թ.)

ՎԱՆԱՁՈՐ
2009

1. **Ընդհանուր դրույթներ**

Մանկավարժական պրակտիկան մագիստրոսական կրթության ծրագրերի պարտադիր բաղադրամասերից է: Մանկավարժական պրակտիկան նպատակաուղղված է ապագա մագիստրոսի նախապատրաստմանը՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում, քոլեջներում, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատելու համար:

Այն նախատեսում է համապատասխան մասնագիտական առարկաներից ուսումնական նյութերի մշակում և պարապմունքների անցկացում հանրակրթական դպրոցների բարձր դասարաններում (ավագ դպրոցներում), վարժարաններում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ համաձայն տվյալ ուսումնական հաստատությունում ընդունված առարկայական ուսումնական ծրագրերի և պլանների:

Մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկան նպատակաուղղված է կապ հաստատելու մագիստրոսական կրթական ծրագրերի յուրացման ընթացքում ստացած տեսական գիտելիքների և ուսումնական գործընթացում այդ գիտելիքների գործնական կիրառության միջև:

Մագիստրատուրայի ուսանողների մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկայի սույն ծրագիրը մշակվել է համաձայն հետևյալ փաստաթղթերի.

- ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» գործող օրենքի,
- ՀՀ ԿԳՆ 2007թ դեկտեմբերի 6-ի №1193-Ն հրամանի,
- մագիստրոսական կրթության պետական կրթական չափորոշիչների,
- ՎՊՄԻ-ի ռեկտորի կողմից հաստատված մագիստրոսական կրթության ուսումնական պլանների:

2. **Մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկայի նպատակները և խնդիրները**

Մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկայի նպատակն է՝ նախապատրաստել մագիստրանտներին՝ հանրակրթական դպրոցների բարձր դասարաններում, քոլեջներում, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի իրականացման համար:

Պրակտիկայի խնդիրներն են.

- մագիստրոսական ծրագրերում ընդգրկված առարկաների ուսուցման ընթացքում ստացած գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրագրումը,
- պարապմունքների անցկացման տարբեր ձևերի և մեթոդիկաների յուրացումը,
- ուսումնական պարապմունքների վերլուծության մեթոդիկայի յուրացումը,
- ժամանակակից կրթական տեխնոլոգիաների հետ ծանոթանալը,
- աջակցել մագիստրանտների ինքնակրթության և ինքնակատարելագործման ունակությունների ձևավորմանը, նրանց մանկավարժական (գիտամանկավարժական) գործունեության ակտիվացմանը,
- աջակցել կրթության և դաստիարակության ընդհանուր նպատակներին համահունչ մագիստրանտների անձային որակների զարգացմանը:

Պրակտիկայի ընթացքում ուսանողը պետք է **ուսումնասիրի.**

ա) վարժարաններում, միջնակարգ և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում.

- տվյալ կրթական հաստատության կառավարման հիմունքները, ուսումնական գործընթացի կազմակերպման կառուցվածքը և հաշվետու փաստաթղթերը,
- համապատասխան առարկաների առարկայական ծրագրերը և դրանց բովանդակությունը,
- պարապմունքների անցկացման պլանների և կոնսպեկտների նախապատրաստումը,
- ուսումնական պարապմունքների անցկացման բոլոր ձևերը,
- առարկաների դասավանդման ժամանակակից տեխնոլոգիաները,
- ուսումնադաստիարակչական գործունեության բնագավառում կիրառվող ժամանակակից ուղղություններն ու մեթոդիկաները և այլն:

բ) բարձրագույն ուսումնական հաստատություններում.

- համապատասխան կրթական ծրագրի պետական կրթական չափորոշիչը և աշխատանքային ուսումնական պլանը,
- տվյալ դասընթացի բովանդակությունը, օգտագործվող ուսումնամեթոդական գրականությունը,

- առարկայական ուսումնական պլանով նախատեսված լաբորատոր աշխատանքների անցկացման համար անհրաժեշտ լաբորատոր սարքավորումը,
- տվյալ առարկայի դասավանդման համար կիրառվող ուսումնական պարապմունքների բոլոր ձևերը,
- պարապմունքների թեմատիկային և նպատակներին համապատասխանող հիմնական և լրացուցիչ գրականության ընտրությունն ու վերլուծությունը,
- ՎՊՄԻ-ում և այլ բուհերում կրթական և գիտական գործունեության կազմակերպման հիմնական ձևերը:

Մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկայի ընթացքում ուսանողը պետք է **յուրացնի.**

- ժամանակակից գիտամեթոդական մակարդակով ուսումնական նյութի բովանդակության մշակումը,
- ուսումնական պարապմունքների համար պլանների և կոնսպեկտների ինքնուրույն նախապատրաստումը,
- տարբեր տեսակի ուսումնական պարապմունքների (դասախոսություններ, գործնական, սեմինար, լաբորատոր աշխատանքներ) մեթոդիկաները,
- բակալավրիատի ուսանողների հետ գործնական և լաբորատոր աշխատանքների անցկացումը (դասախոսի ղեկավարությամբ),
- փորձնական դասախոսությունների անցկացումը (դասախոսի ղեկավարությամբ)՝ մագիստրանտի ատենախոսության թեմայի հետ կապված թեմաներով,
- անցկացված պարապմունքների գիտամեթոդական վերլուծության իրականացումը:

3. Պրակտիկայի կազմակերպումը

Մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկան կազմակերպվում է մագիստրատուրայի երկրորդ կուրսի առաջին կիսամյակում: Պրակտիկայի տևողությունը կազմում է 4 շաբաթ՝ համաձայն մագիստրատուրայի ուսումնական պլանների:

Պրակտիկան անցկացվում է ՎՊՄԻ-ի հենակետային վարժարանում, «Էվրիկա» վարժարանում, Վանաձոր քաղաքի կամ Լոռու մարզի հանրակրթական դպրոցների բարձր դասարաններում (ավագ դպրոցում), Վանաձոր քաղաքում և Լոռու մարզում գործող միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև ՎՊՄԻ-ի համապատասխան մասնագիտական ամբիոններում:

Պրակտիկան սկսվելուց առաջ անցկացվում է ընդհանուր ժողով, որի ընթացքում ուսանողներին հայտնվում է մանկավարժական պրակտիկային վերաբերվող ամբողջ անհրաժեշտ ինֆորմացիան:

Պրակտիկայի ղեկավարությունն իրականացնում է.

ա) մագիստրատուրայում դասավանդող պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներից ընտրված մասնագետը (եթե պրակտիկան անցկացվում է հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում)՝,

բ) մագիստրանտի գիտական ղեկավարը (եթե պրակտիկան անցկացվում է համապատասխան ամբիոնում):

Պրակտիկայի անցկացման առաջին շաբաթվա ընթացքում մագիստրանտը պրակտիկայի ղեկավարների հետ կազմում է պրակտիկայի իր անհատական պլանը: Պրակտիկայի անհատական պլանում ընդգրկվում է պրակտիկանտի աշխատանքը՝ երկու հիմնական ուղղություններով.

- մանկավարժական գործունեություն,
- ուսանողի աշխատանքը համապատասխան մասնագիտական ամբիոնում:

Միջնակարգ ուսումնական հաստատություններում, ավագ դպրոցներում, վարժարաններում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պրակտիկայի անցկացման համար ՎՊՄԻ-ից նշանակված պրակտիկայի ղեկավարը համապատասխան ուսումնական հաստատության ղեկավարության, տնօրենի, տվյալ առարկան դասավանդող ուսուցչի հետ քննարկում և որոշում են պրակտիկայի բովանդակությունը՝ շեշտը դնելով ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման վրա (թեստավորում, նոր մեթոդիկաների կիրառում, գիտական նախագծերի պլանավորում ու անցկացում և այլն): Կազմվում է մագիստրանտի աշխատանքային գրաֆիկ՝ դասալսման և դասերի ինքնուրույն անցկացման ժամերի նշմամբ:

Համապատասխան մասնագիտական ամբիոնում պրակտիկայի անցկացման դեպքում մագիստրանտը իր գիտական ղեկավարի հետ ընտրում են ուսումնական առարկա՝ դասալսումների, մեթոդական նյութերի վերլուծության և նախապատրաստման, ինքնուրույն պարապմունքներ անցկացնելու, ինչպես նաև պարապմունքների վերլուծություն կատարելու համար:

Մագիստրանտների պրակտիկայի աշխատանքային գրաֆիկը կազմվում է ըստ դասացուցակի՝ տվյալ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ համաձայնեցնելուց հետո:

4. **Պրակտիկայի բովանդակությունը**

Պրակտիկայի բովանդակությունը պետք է ապահովի մանկավարժական գործունեության հետ կապված տեխնոլոգիական կարողությունների, ինչպես նաև մարդկանց հետ շփվելու կարողությունների ձևավորումը: Պրակտիկայի անցկացման պրոցեսում պետք է ապահովվի ռազմավարական մտածելակերպի ձևավորում և զարգացում, իրադրության բազմակողմանի ընկալում և գնահատում, մարդկային խմբեր ղեկավարելու հմտություն:

Պրակտիկան պետք է աջակցի մագիստրանտի անձի սոցիալացմանը, գործունեության որակապես այլ տեսակի՝ մանկավարժական գործունեության իրականացմանը, մասնագիտության հասարակական նորմերի և արժեքների յուրացմանը, ինչպես նաև ապագա մագիստրոսների անձնական գործարարական մշակույթի ձևավորմանը:

Պրակտիկայի ընթացքում ուսանողները մասնակցում են պրակտիկայի անցկացման վայրի՝ուսումնական հիմնարկության կամ համապատասխան ամբիոնի մանկավարժական, գիտամանկավարժական և կազմակերպչական աշխատանքներին: Մագստրանտները պրակտիկայի ընթացքում

ա) ուսումնասիրում են.

- տվյալ կրթական հաստատությունների, համապատասխան ամբիոնների գործունեության ուղղվածությունը, բովանդակությունը, ձևերը,
- ուսումնական ծանրաբեռնվածության պլանավորման և հաշվառման փաստաթղթերը,
- ուսուցիչների, դասախոսների պլաններն ու հաշվետվությունները,
- տվյալ կրթական հաստատությունների, համապատասխան ամբիոնների նորմատիվային և ղեկավարման փաստաթղթերը,
- տվյալ կրթական հաստատությունների կառավարման համակարգը,
- մանկավարժական խորհուրդների, ամբիոնների նիստերի արձանագրությունները,
- ուսումնական առարկաների ծրագրերը, դասընթացների տեքստերը, լաբորատոր և գործնական պարապմունքների բովանդակությունը, մեթոդիկաները,

- գիտամեթոդական նյութերը՝ գիտամեթոդական մշակումները, ամբիոնների գիտական ուղղվածությունը, գիտամեթոդական գրականությունը,

բ) կատարում են հետևյալ մանկավարժական աշխատանք.

- հաճախում են տվյալ առարկայի դասերը (հանրակրթական ուսումնական հաստատություններում, վարժարաններում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում), կամ տարբեր ուսումնական առարկաներով ամբիոնի դասախոսների վարած պարապմունքները,
- կատարում են պարապմունքների վերլուծություն,
- ինքնուրույն անցկացնում են դասեր՝ ուսուցչի հետ նախապես համաձայնեցնելուց հետո,
- ինքնուրույն անցկացնում են առնվազն 2 (երկու) ուսումնական պարապմունքներ բակալավրիատի ցածր կուրսերում՝ համաձայն տվյալ առարկայի պլանի, գիտական ղեկավարի և դասախոսի հետ համաձայնեցնելուց հետո,
- մշակում են դասերի, դասախոսությունների կոնսպեկտներ (առնվազն մեկ առարկայից), թեստային առաջադրանքներ,
- ձևավորում են տվյալ առարկայի դասավանդման մեթոդական փաթեթ, որը ներառում է.
    - տվյալ առարկայի դասախոսություններ՝ օգտագործած գրականության ցանկով,
    - հատուկ թեստեր,
    - տվյալ առարկային վերաբերվող վերջին շրջանի տպագիր նյութեր (գրքեր, ամսագրեր, հոդվածներ և այլն),

- ակտիվորեն մասնակցում են կրթական հիմնարկության, ամբիոնի աշխատանքներին.
    - սեմինարներին, մեթոդմիավորումների աշխատանքներին, գիտական կոնֆերանսներին և այլն,
    - կրթական հիմնարկության, ամբիոնի բոլոր աշխատանքներին՝ մեթոդական, գիտամեթոդական նյութերի ստեղծման հետ կապված,
    - կատարում են առանձին հանձնարարություններ՝ պրակտիկայի ծրագրի շրջանակներում:

5. Պրակտիկայի արդյունքների գնահատումը

Մանկավարժական պրակտիկան համարվում է կատարված՝ մագիստրանտի կողմից պրակտիկայի ծրագրի բոլոր պահանջների կատարման դեպքում:

Մագիստրանտների պրակտիկան գնահատվում է պրակտիկայի փաստաթղթերը ներկայացնելու պայմանով:

Պրակտիկայի արդյունքներով մագիստրանտը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

ա) մագիստրոսի անհատական ուսումնական պլան (հավելված 1),

բ) մեթոդական փաթեթ տվյալ առարկայից,

գ) պրակտիկայի օրագիր (հավելված 2):

Փաստաթղթերի ձևակերպման ընթացքում ուսանողը պետք է ուշադրություն դարձնի փաստաթղթերի ճիշտ ձևակերպման վրա՝

- ուսանողի անհատական պլանը պետք է ունենա նշում՝ պլանավորած աշխատանքի կատարման վերաբերյալ,
- պրակտիկայի օրագիրը պետք է պարունակի կատարված աշխատանքի նկարագրությունը, պրակտիկայի անցկացման ինքնագնահատականը, հետևություններ և առաջարկներ՝ պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ և մագիստրոսի ստորագրությունը:

Բոլոր փաստաթղթերը պետք է ձևակերպվեն համաձայն գործավարության կանոնների և առանձին թղթապանակով հանձնվեն ամբիոններ:

Փաստաթղթերի հանձնման ժամկետը որոշում է դեկանատը՝ պրակտիկայի ներածական ժողովում:

Պրակտիկայի գնահատականը դասվում է տեսական առարկաներից ստացած գնահատականներին և հաշվառվում է ուսանողների կիսամյակային ատեստավորման արդյունքներն ամփոփելիս:

Պրակտիկայի փաստաթղթերը պահվում են ամբիոններում:

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

ՕՐԱԳԻՐ
(ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ)

Վանաձոր
200 թ.

Ուսանող_____
ազգանուն անուն հայրանուն

---------- հիմնական կրթական ծրագիր

Ուսուցման համակարգը՝ ----------

Մասնագիտությունը՝ ----------

Կուրսը՝ ----------

Պրակտիկայի անցկացման վայրը՝----------
բուհ, ֆակուլտետ, ամբիոն

_____ կուրս

Պրակտիկայի ղեկավար ----------

Ամբիոնի վարիչ----------Ֆակուլտետի դեկան -----

ԴԱՍԱՑՈՒՑԱԿ

Օրեր	Ժամեր	Առարկայի դասավանդման ձևերը			Օրեր	Ժամեր	Առարկայի դասավանդման ձևերը		
		դասա-խոս.	գործն.	սեմի-նար			դասա-խոս.	գործն.	սեմի-նար
Երկուշաբթի	1-2				Հինգշաբթի	1-2			
	3-4					3-4			
	5-6					5-6			
Երեքշաբթի	1-2				Ուրբաթ	1-2			
	3-4					3-4			
	5-6					5-6			
Չորեքշաբթի	1-2				Շաբաթ	1-2			
	3-4					3-4			
	5-6					5-6			

ԺԱՄԱՏԱԽՏԱԿ

1-ին հերթ		2-րդ հերթ	
1-2		7-8	
3-4		9-10	
5-6		11-12	

Խնդիրները

I Առարկայական ----------

II մանկավարժական ----------

III Հոգեբանական ա) ----------

բ) ----------

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԼԱՆ

N	Աշխատանքի բովանդակությունը		ժամկետը	Կատարողը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԼԱՆ

N	Աշխատանքի բովանդակությունը	ժամկետը	Կատարողը

Վարած ուսումնական պարապմունքների ժամանակացույցը (մեթոդիստի և դասախոսի կողմից հաստատված պլանը կցվում է օրագրին)	
Հաճախած ուսումնական պարապմունքների վերլուծություն՝ ըստ «Գիտամանկավարժական պրակտիկայի ուղեցույց»-ի ա) դասախոսություններ	

Հաճախած ուսումնական պարապմունքների վերլուծություն՝ ըստ «Գիտամանկավարժական պրակտիկայի ուղեցույց»-ի ա) դասախոսություններ	
Հաճախած ուսումնական պարապմունքների վերլուծություն՝ ըստ «Գիտամանկավարժական պրակտիկայի ուղեցույց»-ի ա) դասախոսություններ	

Հաճախած ուսումնական պարապմունքների վերլուծություն՝ ըստ «Գիտամանկավարժական պրակտիկայի ուղեցույց»-ի ա)դասախոսություններ	

Հաճախած ուսումնական պարապմունքների վերլուծություն՝ ըստ «Գիտամանկավարժական պրակտիկայի ուղեցույց»-ի բ)սեմինարներ	

Հաճախած ուսումնական պարապմունքների վերլուծություն՝ ըստ «Գիտամանկավարժական պրակտիկայի ուղեցույց»-ի բ)սեմինարներ	
Հաճախած ուսումնական պարապմունքների վերլուծություն՝ ըստ «Գիտամանկավարժական պրակտիկայի ուղեցույց»-ի գ) գործնական պարապմունք	

Հաճախած ուսումնական պարապմունքների վերլուծություն՝ ըստ «Գիտամանկավարժական պրակտիկայի ուղեցույց»-ի գ) գործնական պարապմունք	

Հաճախած ուսումնական պարապմունքների վերլուծություն՝ ըստ «Գիտամանկավարժական պրակտիկայի ուղեցույց»-ի գ) գործնական պարապմունք	

Այլ մագիստրանտների կողմից կատարած ուսումնական աշխատանքի վերլուծություն ա) դասախոսություն	
Այլ մագիստրանտների կողմից կատարած ուսումնական աշխատանքի վերլուծություն բ) սեմինար պարապմունք	

Այլ մագիստրանտների կողմից կատարած ուսումնական աշխատանքի վերլուծություն գ) գործնական պարապմունք	

ՄԱԳԻՍՏՐԱՆՏԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Դասախոս / /

Ամբիոնի վարիչ / /

Ֆակուլտետի դեկան / /

Կ.Տ.

ՄԱԳԻՍՏՐԱՆՏԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ПРАКТИКАЅИ ՂԵԿԱՎԱՐ / /

ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Դեկան / /

Կ.Տ.

ՈՒՍԱՆՈՂ ՊՐԱԿՏԻԿԱՆՏԻ ՀՈՒՇԱԹԵՐԹ

1. Մագիստրանտների գիտամանկավարժական պրակտիկան սկսվում է կցված ուսումնական հաստատության (ամբիոնի) հետ ծանոթությունից: Անհրաժեշտ տեղեկություններ ուսանողները ստանում են ամբիոնի վարիչի, դասախոսի հետ զրույցից, տվյալ ամբիոնի գործունեությանը վերաբերվող փաստաթղթերից (կրթական չափորոշիչներ, ուսումնական պլաններ, կրթադաստիարակչական աշխատանքի պլան, դասամատյան և այլն): Ստացված տեղեկությունները պետք է հիմք ծառայեն պրակտիկայի ընթացքում գործունեություն ծավալելու համար:

2. Յուրաքանչյուր ուսանող պարտավոր է ամբիոնում ամեն օր աշխատել 6 ժամ իր անհատական աշխատանքի պլանի համաձայն: Պրակտիկայի ամբողջ ժամանակամիջոցի համար պլանը կազմում է պրակտիկանտը՝ առարկան դասավանդող դասախոսի և պրակտիկայի ղեկավարի հետ համատեղ:
3. Պրակտիկայի ընթացքում ուսանողը պետք է ուսումնասիրի.

- համապատասխան կրթական ծրագրի պետական կրթական չափորոշիչը և աշխատանքային ուսումնական պլանը,
- տվյալ դասընթացի բովանդակությունը, օգտագործվող ուսումնամեթոդական գրականությունը,
- առարկայական ուսումնական պլանով նախատեսված լաբորատոր աշխատանքների անցկացման համար անհրաժեշտ լաբորատոր սարքավորումը,
- տվյալ առարկայի դասավանդման համար կիրառվող ուսումնական պարապմունքների բոլոր ձևերը,
- ՎՊՄԻ-ում կրթական և գիտական գործունեության կազմակերպման հիմնական ձևերը
- հաճախի պրակտիկայի ծրագրով և իր անհատական պլանով նախանշված ուսումնական պարապմունքները,
- հաճախի այլ մագիստրանտների կողմից վարվող ուսումնական պարապմունքները
- կատարի պարապմունքների թեմատիկային և նպատակներին համապատասխանող հիմնական և լրացուցիչ գրականության ընտրություն ու վերլուծություն,
- կատարի պարապմունքների վերլուծություն՝ ըստ պրակտիկայի ուղեցույցում առաջադրած սխեմայի,
- կատարի ամբիոնի վարիչի կամ դասախոսի առանձին առաջադրանքները:
- Պրակտիկայի ողջ ժամանակամիջոցում մագիստրանտները՝ առարկայի դասախոսի ղեկավարությամբ բակալավրիատի ցածր կուրսերում վարում են ոչ պակաս քան 5-6 ուսումնական պարապմունքներ (դասախոսություններ, սեմինար, լաբորատոր, գործնական պարապմունքներ):

Ուսումնական պարապմունքների կոնսպեկտների քննարկումը դասախոսի հետ նախապես պետք է քննարկվի կատարումից 1 - 2 օր առաջ: Այլապես ուսանողին չի թույլատրվում վարել ուսումնական պարապմունքները: Պրակտիկան ավարտելուց հետո ուսանողը 3 օրվա ընթացքում հանձնում է հետևյալ փաստաթղթերը.

ա) պրակտիկայի օրագիրը (լրացված)
բ) դասախոսության, սեմինար, գործնական (լաբորատոր) պարապմունքների մեկական կոնսպեկտ,
գ) համառոտ հաշվետվություն

4. Պրակտիկայի պաշտպանություն:

Կատարված ուսումնական աշխատանքի համար դասախոսը նշանակում է հանրագումարային գնահատականներ, Այդ գնահատականի հիման վրա գիտամանկավարժական պրակտիկայի ղեկավարը նշանակում է պրակտիկայի ընդհանուր գնահատականը: